

Գեղարքունիքի մարզպետարանում քաղաքացիներից ստացված առաջարկությունների, դիմումների և բողոքների թիվը կազմել է 1204, որից 73-ը վերահասցեագրվել է ՀՀ Վարչապետի աշխատակազմից:

1204 դիմումներից՝

բավարարվել է	-	339
մերժվել	-	642
տրվել է պարզաբանում	-	223

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի, մարզպետի տեղակալի, մարզպետարանի գլխավոր քարտուղարի, գլխավոր քարտուղարի տեղակալի և ստորաբաժանումների ղեկավարների կողմից կատարվել է 279 քաղաքացիների ընդունելություն, այդ թվում՝ 194-ը ՀՀ Գեղարքունիքի մարզպետի կողմից, որից՝

բավարարվել է	-	76
մերժվել	-	74
տրվել է պարզաբանում	-	44

Յուրաքանչյուր ամիս ՀՀ Վարչապետի աշխատակազմ և լիազոր պետական մարմին է ուղարկվել տեղեկատվություն քաղաքացիների ընդունելության, քաղաքացիներից ստացված առաջարկությունների, դիմումների և բողոքների թվի, բնույթի և ընթացքի վերաբերյալ:

Գրանցվել է Թեժ գծով ստացված 8 հեռախոսազանգ:

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան մուտքագրվել է՝

	11981 մտից գրություն
	2228 ներքին փաստաթուղթ
ելից է արվել՝	4712 գրություն

ՀՀ Գեղարքունիքի մարզպետն ընդունել է 405 անհատական որոշում: Յուրաքանչյուր ամիս լիազոր պետական մարմին է ուղարկվել ՀՀ Գեղարքունիքի մարզպետի ընդունած իրավական ակտերի պատճենները:

Արձանագրվել ու ՀՀ Գեղարքունիքի մարզպետի ստորագրման է ներկայացվել ՀՀ Գեղարքունիքի մարզի խորհրդի 1 նիստի արձանագրությունը և ՀՀ Գեղարքունիքի մարզպետի մոտ կայացած 6 խորհրդակցությունների արձանագրությունները: